ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԿՀ 2016թ. ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 3

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ 5

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ 6

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ 7

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ 8

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ-ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ 9

ԳԻՏԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ 10

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ 11

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԿՀ
2016թ. ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հիմնական արդյունքները. Հիմնադրամի վերջին տարիների աշխատանքների ուղղվածությունը թելադրվում է այն իրողությամբ, որ Հայաստանը ներքաշված է գլոբալ և տարածաշրջանային հարթություններում ընթացող «հիբրիդային պատերազմներում», որոնցում մասնակիցների անվտանգությունը մեծ չափով պայմանավորված է նրանց ունեցած մտավոր ռեսուրսներով և մարդկային կապիտալի որակով (վերջիններս դասվում են այսպես կոչված *«կրիտիկական ոլորտների և ենթակառուցվածքների»* շարքին)։ Այդ համատեքստում Հիմնադրամի 2016թ. հիմնական արդյունքները հետևյալն են.

1. Հաշվի առնելով տեղեկատվական բաղադրիչի կարևորությունը ռազմաքաղաքական զարգացումներում՝ մշակվել և հրատարակության է պատրաստվել ***«Տեղեկատվական անվտանգության»*** դասընթացը (առաջին նման աշխատությունն է ՀՀ-ում), որն իրագործվել է ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի աջակցությամբ։ Նշենք, որ այդ աշխատանքներին ներգրավվել են ոչ միայն ՀՀ և ԼՂՀ, այլև միջազգային լայն ճանաչում ունեցող փորձագետներ։ Տեղեկատվական խնդիրներին են անմիջապես առնչվում նաև ***«Տեղեկատվական անվտանգության անգլերեն-ռուսերեն-հայերեն հանրագիտական բառարանը»*** և ռազմական ու համացանցային ոլորտներում տեղեկատվական պատերազմների խնդիրներին նվիրված երկու մենագրությունները *(տե՛ս Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի հաշվետվությունը, էջ 5)։*
2. Ազգային անվտանգության տեսանկյունից կարևորելով Հայկական հանրության (ՀՀ, ԼՂՀ և Սփյուռք) մտավոր ռեսուրսների համախմբման խնդիրը՝ մշակվել է ***«Հայաստան- Սփյուռք առցանց համալսարանի»*** (Armenia - Diaspora University - *ADU) հայեցակարգը*։ Նման համալսարանը թույլ կտա ոչ միայն առաջատար մասնագետների միջոցով իրականացնել բարձրորակ ուսուցում, այլև ստեղծել հարթակ, որտեղ կքննարկվեն Հայկական հանրության անվտանգության և այլ հրատապ խնդիրները և կառաջարկվեն լուծումներ դրանց վերաբերյալ։ *ADU–ի* հենքում ընկած է Հիմնադրամում կազմված Սփյուռքի և Հայաստանի առաջատար գիտնականների «կադրային շտեմարանը» *(տե՛ս Ուսումնական կենտրոնի և Հայագիտական կենտրոնի հաշվետվությունները, էջ 8, 7)։*
3. Վերոնշյալ խնդիրների համատեքստում կատարվել են ռազմավարության մշակման մեթոդների և Իսրայելի ռազմաքաղաքական փորձի ուսումնասիրություններ, որոնք հրատարակվել են երկու մենագրությունների տեսքով *(տե՛ս Քաղաքական հետազոտությունների կենտրոնի հաշվետվությունը, էջ 6)։*

Հրապարակումները. 2016-ին հրատարակվել են 6 գիրք և 21 ամսագիր (եռալեզու «21 Դար» և «Գլոբուս»)։ Հիմնադրամի կայքը (բաժանորդների թիվը՝ 2750) գրավում է առաջատար դիրքեր մասնագիտական վարկանիշային աղյուսակներում։ Այցելուների թիվը կազմել է 160 հազար (170 երկրից), ընթերցումներինը՝ 280 հազար։

Ընդհանուր առմամբ հիմնադրամը հրատարակել է **78** գիրք և հատուկ զեկույց, **307** ամսագիր և հատուկ թողարկում, իսկ կայքում տեղադրվել է շուրջ 7,5 հազար նյութ *(տե՛ս Հրատարակչական-տեղեկատվական կենտրոնի հաշվետվությունը, էջ 9)։*

Համագործակցություն. Հիմնադրամը համագործակցում է հետևյալ կառույցների հետ՝ *1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ, 2. ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտե, 3. ՀՀ սփյուռքի նախարարություն, 4. ՀՀ պաշտպանության նախարարություն, 5. «Ինտեգրացիա և զարգացում» ու «Եվրասիական վերլուծական ակումբ» ՀԿ-ներ, 6. Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոն (Մոսկվա), 7. Հունաստանի Բյուզանդական հիմնադրամ (Աթենք), 8. Քաղաքակրթությունների երկխոսության ինստիտուտ (Բեռլին)։*

Հիմնադրամն ակտիվ համագործակցում է նաև ***10*** առաջատար փորձագետների հետ (ՀՀ և ԼՂՀ), որոնք ունեն արտահաստիքային «Հիմնադրամի խորհրդական» կարգավիճակ *(տե՛ս Գիտական-փորձագիտական խորհրդի հաշվետվությունը, էջ 10)*:

Վարչական. Հաշվետու տարում Հիմնադրամում կատարվել են աուդիտ և ստուգում ՀՀ վարչապետի «Վերահսկողության ծառայության» կողմից, և որևէ լուրջ թերացում չի արձանագրվել:

Հիմնադրամի 2016թ բյուջեն կազմել է 107.4 մլն դրամ, որը 2017թ. համար կրճատվել է 10%-ով և ներկայումս կազմում է 97 մլն դրամ: Այս հանգամանքը խնդիրներ է առաջացրել ինչպես աշխատակազմի, այնպես էլ Հիմնադրամին պատկանող՝ Վայոց ձորի Ամաղու գյուղում գտնվող շինության և տարածքի պահպանման խնդիրներում *(տե՛ս Գործունեության ապահովման ծրագրի հաշվետվությունը, էջ 11)*:

2017թ. հիմնական ծրագրերը.

1. Հայտնի է, որ պատերազմական իրավիճակում գտնվող երկրների համար ռազմավարական նշանակության առաջնային խնդիրներից են սեփական և պայմանական հակառակորդի գործունեության ոլորտների ***կրիտիկական ենթակառուցվածքների (ԿԵ)*** բացահայտումն ու այդ ուղղությամբ համապատասխան գործողությունների մշակումը: Այս խնդիրը խիստ ակտուալ է Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների համատեքստում, քանի որ ***կրիտիկական ենթակառուցվածքների խնդիրները ՀՀ-ում, որքան մեզ հայտնի է, դեռևս բավականաչափ մշակված չեն:***
   Ելնելով վերոնշյալից՝ 2017-ին Հիմնադրամի աշխատանքները գլխավորապես ուղղված են լինելու՝ հնարավորինս համալիր ուսումնասիրել և բացահայտել ***Հայաստանի և Ադրբեջանի ԿԵ-ները ռազմաքաղաքական, տնտեսական, սոցիալ-հոգեբանական, տեղեկատվական-գիտակրթական և սփյուռքի ներուժի օգտագործման ոլորտներում:*** Ակնհայտ է, որ ***նման աշխատանքը ենթադրում է համագործակցություն Հիմնադրամի և շահագրգիռ պետական կառույցների միջև, քանի որ այլ պարագայում նախագծի իրականացումը կունենա զուտ տեսական նշանակություն:***
2. Հայկական հանրության մտավոր ներուժի վերհանման և այն գործնական հարթություն տեղափոխելու նպատակով ***Հայաստան-Սփյուռք առցանց համալսարանի համատեքստում կկազմակերպվեն դասընթացներ թիրախային լսարանների համար:*** Նկատենք, որ *ADU–ի* վերջնական ձևավորումից հետո այդ համալսարանի եկամուտները կարող են կազմել նվազագույնը $1-2 մլն:
3. Կիմբագրվի և կիրատարակվի ***«Տեղեկատվական անվտանգություն»*** դասընթացը:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

1. Կենտրոնի ուսումնասիրություններն ուղղված են ՀՀ տեղեկատվական անվտանգության (*ՏԱ*) հիմնախնդիրների բացահայտմանը և դրանց լուծումների առաջարկմանը: Մասնավորապես, որպես հիմնախնդիր է ընդունվել այն իրողությունը, որ առայսօր ՀՀ-ում բացակայում է *ՏԱ* ոլորտին նվիրված որևէ հայրենական ուսումնական ձեռնարկ, և որպես լուծում գրվել է ***«Տեղեկատվական անվտանգություն»*** դասընթացը (ՀՀ ԿԳՆ ԳՊԿ աջակցությամբ): Հեղինակային խմբում (համակարգող՝ Գ.Հարությունյան) ընդգրկված են նաև միջազգային ճանաչում ունեցող փորձագետներ՝ պրոֆ. Ջորջ Կոստոպուլոսը (Աթենք), պրոֆ. Սերգեյ Գրինյանը (Մոսկվա) և պրոֆ. Գեորգի Պոչեպցովը (Կիև):
2. Վերոնշյալ աշխատանքի համատեքստում արձանագրվել է նաև, որ ՀՀ-ում բացակայում է նաև *ՏԱ* ոլորտին նվիրված բառարան: Սակավ են ուսումնասիրված նաև անհատական կիբեռանվտանգության և ռազմական ոլորտում ընթացող տեղեկատվական գործողությունների խնդիրները: Այդ բացը լրացնելու նպատակով 2016-ին պատրաստվել և հրատարակվել են հետևյալ աշխատությունները.
   - *Է.Ղազարյան, «Տեղեկատվական անվտանգության անգլերեն – ռուսերեն – հայերեն հանրագիտական բառարան»,*
   - *Ս.Մարտիրոսյան, «Անձնական կիբեռանվտանգության հիմունքներ»,*
   - *Ա.Ղալեչյան, «Տեղեկատվական պայքարը ռազմական ոլորտում»:*

3. Իրականացվել է ՀՀ տեղեկատվական տարածքի մեդիա դաշտի մոնիթորինգ՝ ավանդական և ինտերնետային լրատվամիջոցների կողմից տարածվող գերակա արժեքների տեսանկյունից:
4. ***Հայաստան-Սփյուռք առցանց համալսարանի (ADU)*** համար կենտրոնը մշակել է *ՏԱ* խնդիրներին առնչվող դասախոսություններ:
5. Կենտրոնի փորձագետները և արտահաստիքային խորհրդականները 2016-ին հրապարակել են *22* հոդված, *8* զեկուցմամբ մասնակցել են գիտաժողովների և սեմինարների, բազմիցս հանդես են եկել ԶԼՄ-ում: Նախկինում հրատարակվել է ՏԱ խնդիրներին նվիրված 22 գիրք:

2017թ. ծրագրերը

1 Կենտրոնը Քաղաքական հետազոտությունների և Հայագիտական կենտրոնների հետ համատեղ մասնակցելու է ***«Հայաստանի (ՀՀ, ԼՂՀ) և Ադրբեջանի կրիտիկական ենթակառուցվածքները»*** նախագծի աշխատանքներին ***տեղեկատվական անվտանգության կրիտիկական ենթակառուցվածքների բացահայտման մասով,*** *որը ներառում է հետևյալ ուսումնասիրությունները.*

- *«Հայաստանի և Ադրբեջանի* տեղեկատվական կրիտիկական ենթակառուցվածքների ուսումնասիրություն»՝ կիբեռանվտանգության տեսանկյունից, այդ թվում ադրբեջանական սոցցանցերի կոնտենտ վերլուծություն:
- *«Հայաստանի և Ադրբեջանի արժեքային համակարգերի համեմատական վերլուծություն»*:
- *«Հայաստանի, Ադրբեջանի մեդիա դաշտի կոնտենտ վերլուծություն»* ԶԼՄ-ում տարածվող գերակա արժեքների և տեղեկատվական քաղաքականության առանձնահատկությունների վերհանման տեսանկյունից:

2 Կխմբագրվի և կհրատարակվի ***«Տեղեկատվական անվտանգություն»*** դասընթացը:

3 Կենտրոնը կշարունակի մասնակցել ***Հայաստան-Սփյուռք առցանց համալսարանի (ADU)*** նախագծի իրականացման աշխատանքներին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ուսումնասիրություններն ուղղված են ՀՀ ազգային անվտանգության համատեքստում տարածաշրջանային աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական գործընթացների վերլուծությանը: Այդ ուղղությամբ 2016թ. կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Հաշվի առնելով սփյուռք-պետություն գործակցության իսրայելական փորձի ուսումնասիրման և Իսրայել-Ադրբեջան համագործակցության խնդիրների ակտուալությունը՝ կենտրոնը կատարել է Իսրայելի քաղաքականության վերաբերյալ հետազոտություն, որը հրատարակվել է մենագրության տեսքով (***Կ. Վերանյան, «Իսրայելի քաղաքականության վերաբերյալ»):***
2. Քաղաքական հետազոտությունների իրականացման հարցում էապես կարևորելով ռազմավարական նշանակության վերլուծությունները՝ կատարվել է ռազմավարական վերլուծությունների մեթոդաբանական խնդիրների վերաբերյալ հիմնարար հետազոտություն, որը հրատարակվել է մենագրության տեսքով (***Р. Арзуманян, «Стратегический анализ и инструменты стратегии»):***
3. Տարածաշրջանային ռազմաքաղաքական և տնտեսական միտումների վերհանման նպատակով 2016թ. կենտրոնն իրականացրել է Ադրբեջանում, Վրաստանում, Թուրքիայում, Իրանում և Արցախում ներքին ու արտաքին գործընթացների ամենամսյա մշտադիտարկում: Այդ հետազոտության արդյունքները հրատարակվել են ամսագրերում:
4. Կենտրոնը ***Հայաստան-Սփյուռք առցանց համալսարանի (ADU)*** համար մշակել է քաղաքական հետազոտությունների խնդիրներին առնչվող դասախոսություններ:

Կենտրոնի աշխատակազմը 2016թ. հրապարակել է 2 գիրք, 58 հոդված, 21 զեկուցմամբ մասնակցել սեմինարների և գիտաժողովների, տվել է տասնյակ հարցազրույցներ ԶԼՄ-ում: Նախկինում Հիմնադրամի կողմից հրատարակվել են քաղաքական-տնտեսական, ազգային անվտանգության խնդիրներին նվիրված բազմաթիվ հոդվածներ, 27 գիրք:

2017թ. ծրագրերը

Տեղեկատվական հետազոտությունների և Հայագիտական կենտրոնների հետ համատեղ իրագործվելու է ***«Հայաստանի (ՀՀ, ԼՂՀ) և Ադրբեջանի կրիտիկական ենթակառուցվածքները»*** նախագիծը (կիրառելով մի շարք, այդ թվում և «աղետների տեսության» մեթոդաբանական գործիքակազմը: Նախագծում կենտրոնը պատասխանատու է հետևյալ հետազոտական ուղղությունների համար.

- Հայաստանի և Ադրբեջանի սոցիալ-տնտեսական, էներգետիկ համակարգի կրիտիկական ենթակառուցվածքների բացահայտում և վերլուծում,
- Հայաստանի և Ադրբեջանի մարդկային կապիտալի ներուժի կրիտիկական ենթակառուցվածքների բացահայտում և վերլուծում (Երևանի Բրյուսովի անվան Լեզվագիտական- հասարակագիտական համալսարանի հետ համատեղ),

2. Հարավային Կովկասի ռազմաքաղաքական գործընթացներին Իսրայելի ներգրավման միտումները հաշվի առնելով՝ կենտրոնը նախատեսում է կատարել հետազոտություն «Իսրայել. պաշտպանական-քաղաքական, էներգետիկ և այլ հիմնահարցեր» թեմայի շրջանակներում, որը, հնարավոր է, կներկայացվի առանձին աշխատության տեսքով (ՀՀ ՊՆ-ի հետ համատեղ):
3. Կարևորելով ռազմավարական դրույթներ մշակելու համատեքստում միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կանխատեսումները՝ վերջիններս վերլուծվելու են, իսկ նման կանխատեսումներում կիրառվող մեթոդաբանությունները և գործիքակազմը կուսումնասիրվեն:
4. Կենտրոնը կշարունակի մասնակցել ***Հայաստան-Սփյուռք առցանց համալսարանի (ADU)*** նախագծի իրականացման աշխատանքներին:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ուսումնասիրություններն ուղղված են հայկական հանրության մտավոր ներուժի բացահայտմանը, գնահատմանը և դրանց կիրառման արդյունավետության բարձրացման ուղիների վերհանմանը:

2016թ. կենտրոնն իր հետազոտական աշխատանքներն իրականացրել է հետևյալ ուղղություններով.

1. Երկարամյա հետազոտությունների արդյունքները հիմք են հանդիսացել ***Հայաստան-Սփյուռք առցանց համալսարանի (ADU)*** գաղափարի ձևավորման և այն նախագծի վերածելու համար: Մասնավորապես՝ պատրաստվել է Հայաստանի և Սփյուռքի մասնագետների շտեմարան՝ համալսարանի գործունեությունն ապահովելու համար:
2. ***Համեմատական սփյուռքագիտության*** ծրագրով ուսումնասիրվել է սփյուռքի նկատմամբ Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի և Իրանի պետական քաղաքականությունը: Սույն ուղղությամբ իրականացվող հետազոտությունները կրում են շարունակական բնույթ:
3. ***«Գիտական սփյուռք-պետություն փոխգործակցության միջազգային և հայկական փորձը» ծրագրով*** ուսումնասիրվել են ոլորտի միջազգային փորձը, սփյուռքի գիտական ներուժի համախմբման, գիտահետազոտական աշխատանքների համակարգման, ֆինանսական աջակցման համար ստեղծված սփյուռքյան գիտական կառույցների քաղաքականությունը, գիտական սփյուռքի հետ տարվելիք աշխատանքները կանոնակարգելու նպատակով տարբեր երկրներում ընդունված պետական որոշումներն ու հայեցակարգերը, ռազմավարական նպատակները, համագործակցության ձևերն ու եղանակները:
4. ՀՀ ՄՆ պատվերով պատրաստվել է երկու զեկույց հայ համայնքների անվտանգության և սիրիահայության խնդիրների վերաբերյալ: Վերլուծվել են նաև հայրենադարձության հնարավորությունները, որոնց առնչությամբ արվել են առաջարկություններ:
5. ՀՀ ՄՆ պատվերով ուսումնասիրվել են 1950-1980-ական թթ. առանձին երկրներից հայերի արտագաղթի պատճառները, ծավալները, տեղաշարժերի, ժողովրդագրական, կառուցվածքային, սոցիալական, հասարակական-քաղաքական, մշակութային հետևանքներն ինչպես ելքի, այնպես էլ նոր հանգրվան հանդիսացող երկրներում: Հետազոտության արդյունքներն ամփոփվել են Տիգրան Ղանալանյանի **«Սփյուռքի ներքին տեղաշարժերը 1950-1980-ական թվականներին»** մենագրությունում:

Կենտրոնի աշխատակիցները վերոհիշյալ ուղղություններով 2016թ. հրատարակել են 1 գիրք, 7 հոդված և պատրաստել 2 զեկույց: 10 զեկուցմամբ մասնակցել են գիտաժողովների և սեմինարների, տվել շուրջ երկու տասնյակ հարցազրույց:

Նախկինում Նորավանք ԳԿՀ-ի կողմից հրատարակվել է Հայության խնդիրներին նվիրված 23 գիրք:

2017թ. ծրագրերը

1. Կենտրոնը Քաղաքական հետազոտությունների և Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնների հետ համատեղ մասնակցելու է ***«Հայաստանի (ՀՀ, ԼՂՀ) և Ադրբեջանի կրիտիկական ենթակառուցվածքները»*** նախագծի աշխատանքներին՝ ուսումնասիրելով *հայկական և ադրբեջանական սփյուռքերի կրիտիկական ենթակառուցվածքները*:
2. ***«Իսրայել, Իրան, Թուրքիա, Ադրբեջան. պետական քաղաքականությունը «դիասպորայի» նկատմամբ»*** հիմնարար հետազոտություն՝ Սփյուռքի նախարարության պատվերով:
3. ***«Հայկական, հունական և վրացական սփյուռքերը. ընդհանուր խնդիրներ և համագործակցության հնարավորություններ»*** խորագրով հետազոտություն:
4. Կենտրոնը կշարունակի մասնակցել ***Հայաստան-Սփյուռք առցանց համալսարանի (ADU)*** նախագծի իրականացման աշխատանքներին:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի նպատակն է պետական կառույցների աշխատակիցների և բուհերի ուսանողների համար Ազգային անվտանգության (ԱԱ) ոլորտի հիմնարար խնդիրներին առնչվող դասախոսությունների կազմակերպումը: Միևնույն ժամանակ, ԱԱ կարևորագույն խնդիրներից են Հայաստան-Սփյուռք համագործակցությունը և Հայկական հանրության մտավոր ներուժի համախմբումը: Այդ համատեքստում, հաշվետու տարում կենտրոնն իրագործել է.

1. Հայաստան–Սփյուռք առցանց համալսարանի (ADU) հայեցակարգային դրույթների մշակումը և Հայաստանի ու արտերկրի մասնագետների կողմից հնարավոր 10 դասընթացների կազմավորումը:
2. Հաշվետու տարում, համաձայն «Նորավանքյան ընթերցումներ» ծրագրի, կենտրոնը կազմակերպել է հատուկ եռօրյա դասընթաց (փակ, ծառայողական ձևաչափով) «Ազգային անվտանգության հարցեր» խորագրով՝ ԱԱԽ և ՊՆ աշխատակիցների համար, ինչպես նաև կարդացվել է 2 դասախոսություն ՀՀԿ Քաղաքական դպրոցի շրջանակներում: Ընդհանուր առմամբ, «Նորավանքյան ընթերցումների» շրջանակներում կազմակերպվել է 100 դասախոսություն: Կենտրոնը նաև աջակցել է 7 գիտաժողովի և 7 սեմինարի կազմակերպմանը և դրանց հիման վրա տեղադրել է 43 տեսանյութ Հիմնադրամի Youtube-յան էջում:
3. Կատարվել է «Նորավանք» ԳԿՀ-ի հետ համագործակցող փորձագետների և սեմինարների մասնակիցների տվյալների շտեմարանի համալրումը Evernote ծրագրի ձևաչափում (հիմնադրամի այլ կենտրոնների հետ համատեղ):
4. Հրատարակվել է կրթական խնդիրներին նվիրված 1 հոդված, կարդացվել է 1 զեկուցում:

2017թ. ծրագրերը

2017թ. կենտրոնի հիմնական նպատակը *ADU* պիլոտային նախագծի ձևավորումն է և փորձարկումը (առնվազն 10 դասախոսություն)՝ ուղղված Սփյուռքի և Հայաստանի *թիրախային* լսարաններին:

Հատուկ նշենք, որ *ADU* վերջնական ձևավորումից հետո այդ համալսարանի եկամուտները, ըստ մեր գնահատականների, կարող են կազմել մի քանի մլն դոլար: Նկատենք նաև, որ *ADU* նախագիծը հետաքրքրություն է առաջացրել նաև Սփյուռքում: Մասնավորապես, հայտնի գործարար Արդեն Շելեֆյանը (Շվեյցարիա) և պրոֆ. Զավեն Եկավյանը (Ֆրանսիա) համագործակցության պատրաստակամություն են հայտնել:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ-ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2016թ. ընթացքում կենտրոնը հրատարակել է՝

1. ***6 գիրք***
   - ***Էդուարդ Ղազարյան,*** «Տեղեկատվական անվտանգության անգլերեն-ռուսերեն-հայերեն հանրագիտական բառարան», Երևան, 2016, 460 էջ:
   - ***Արմեն Ղալեչյան,*** «Տեղեկատվական պայքարը ռազմական ոլորտում», Երևան, 2016, 80 էջ:
   - ***Սամվել Մարտիրոսյան,*** «Անձնական կիբեռանվտանգության հիմունքներ», Երևան, 2016, 62 էջ:
   - ***Կարեն Վերանյան,*** «Իսրայելի քաղաքականության վերաբերյալ», Երևան, 2016, 224 էջ:
   - ***Рачья Арзуманян,*** «Стратегический анализ и инструменты стратегии», Ереван, 2016, 328 страниц.
   - ***Տիգրան Ղանալանյան*** «Սփյուռքի ներքին տեղաշարժերը 1950-1980-ական թվականներին», Երևան, 2016, 164 էջ:

2. ***21 ամսագիր*** ՝21-րդ ԴԱՐ՝ 6 համար, 21-ի ԲԵԿ՝ 4 համար, 21st CENTURY՝ 1 համար, ԳԼՈԲՈՒՍ՝ 10 համար:

Ընդհանուր առմամբ Հիմնադրամը հրատարակել է **78** գիրք և հատուկ զեկույց, **307** ամսագիր և հատուկ թողարկում:

«Նորավանք» ԳԿՀ կայքում զետեղված է շուրջ 7.500 նյութ: Կայքն ունի ավելի քան 2500 մշտական բաժանորդ, որոնք ամեն օր ստանում են կայքում տեղադրվող նյութերը երեք լեզվով:

2016թ. ընթացքում Հիմնադրամի կայքի՝ 170 երկրներից (ըստ *Flagcounter* հաշվիչի) կատարված այցելությունները և էջերի ընթերցումները (ըստ *Rambler* հաշվիչի) կազմել են.

այցելություն (visits)	160 000
էջերի թերթում (pageviews)	280 000

Rambler-ի Հումանիտար գիտությունների բաժնի «Կազմակերպություններ» ենթաբաժնի թվով 31 կայքից կազմված վարկանիշային աղյուսակում «Նորավանքի» կայքը գրավում է 2-րդ տեղը, իսկ *Openstat-ի* «Քաղաքագիտություն» բաժնի 59 կայքերից կազմված վարկանիշային աղյուսակում՝ 9-րդ տեղը:

2016թ. ընթացքում ամսագրերի և գրքերի բաժանորդագրությունից ու վաճառքից ստացվել է մոտ 2 մլն դրամ:

2017թ. ծրագրերը

2017թ. նախատեսվում է հրատարակել 20 ամսագիր՝ 21-րդ ԴԱՐ – 10 համար, ԳԼՈԲՈՒՍ - 10 համար և 3 գիրք:

Առաջարկություն. Հիմնադրամի կողմից հրատարակված «Մեր հաղթանակները» քառահատորի հիման վրա 2014թ. հրատարակվել է համառոտ «Հայաստանը պատերազմներում» գիրքը: Կարծում ենք, որ այն կարելի է թարգմանել ռուսերեն, անգլերեն և տարածել (վաճառքի միջոցով) Սփյուռքի համայնքներում, ինչը խիստ նպաստավոր է նաև Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման տեսանկյունից: Նկատենք նաև, որ նախնական հաշվարկներով դա կարող է բավականաչափ շահույթ բերել այս խնդրում ներդրում կատարող կազմակերպությանը:

ԳԻՏԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հաշվետու ժամանակահատվածում «Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհուրդը քննարկել է հետազոտական ծրագրերի մշակման, գրքերի հրատարակման, գիտաժողովների կազմակերպման և Հիմնադրամի գիտական գործունեությանն առնչվող այլ հարցեր: Խորհուրդը կազմակերպել է նաև 17 սեմինար և գիտաժողով: Առայսօր կազմակերպվել են ավելի քան 200 սեմինար և գիտաժողով:

Խորհուրդն իր մասնակցությունն է ցուցաբերել նաև «Նորավանք» ԳԿՀ Ուսումնական և կրթական ծրագրերի համատեքստում անցկացվող դասընթացների՝ «Նորավանքյան ընթերցումների» կազմակերպմանը:

«Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի կազմում ընդգրկված է 34 անձ, որոնցից 15-ը հանդիսանում են ասոցացված անդամներ: Հիմնադրամի արտահաստիքային խորհրդականի կարգավիճակ ունի 10 անձ:

Խորհրդի արտասահմանյան անդամներն են՝ ***Սերգեյ Գրինյանը*** (ՌԴ Ռազմական ակադեմիայի պրոֆեսոր, Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն, Մոսկվա, ՌԴ), ***Միհրան Դաբաղը*** (Բոխումի համալսարանի պրոֆեսոր, Գերմանիա), ***Զավեն Եկավյանը*** (պրոֆեսոր, Ֆրանսիա):

Խորհրդի պատվավոր անդամներ են՝ ***Բաբկեն Վարդանյանը*** («Հայք» հաստատության տնօրեն), ***Վարդան Հարությունյանը*** (ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ), ***Մեյրան Օհանյանը*** (գեներալ-գնդապետ):

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

1. «Նորավանք» ԳԿՀ 2016թ. ՀՀ պետական բյուջեից ստացել է 107355,9 հազ. դրամ, որի շուրջ 82%-ը (88407,1 հազ. դրամ) ծախսվել է անձնակազմի վարձատրության վրա (աշխատավարձ, մասնագիտական ծառայությունների և գիտական-ստեղծագործական գծով ծախսեր), իսկ 18%-ը (18948,9 հազ. դրամ) օգտագործվել է հրատարակչական և սպասարկման ծախսերի վրա։
2. Հիմնադրամը ստացել է շուրջ 27,5 մլն դրամի արտաբյուջետային միջոցներ (Գազպրոմ Արմենիայից, ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ից, ՀՀ Սփյուռքի նախարարությունից, ամսագրերի բաժանորդագրությունից, գրքերի վաճառքից), ինչը ծախսվել է աշխատողների աշխատավարձի, հավելավճարների, պարգևատրումների, գիտական-ստեղծագործական աշխատանքների, հրատարակչական, տնտեսական և գրասենյակային, գործուղման, համակարգչային սարքավորումների և այլ ծախսերի վրա։
3. Տարեսկզբին կատարվել է «Նորավանք» ԳԿՀ 2015թ. գործունեության և ֆինանսական հաշվետվության աուդիտ, իսկ սեպտեմբերին Հիմնադրամը ստուգվել է ՀՀ վարչապետի վերահսկողության ծառայության կողմից։ Աուդիտի եզրակացությամբ «Նորավանք» ԳԿՀ գործունեությունն ու ֆինանսական հաշվետվությունն ամբողջապես համապատասխանել են ՀՀ օրենսդրությանը։ Թերացումներ չեն արձանագրվել նաև ՀՀ վարչապետի վերահսկողության ծառայության կողմից։
4. 2016թ. համեմատ «Նորավանք» ԳԿՀ 2017թ. բյուջեն կրճատվել է 10%-ով՝ 10 735.6 հազար դրամով։ Արդյունքում՝ «Նորավանք» ԳԿՀ 2017թ. բյուջեում 2 940,0 հազար դրամով կրճատվել է աշխատավարձի ֆոնդը, 7 795.6 հազար դրամով՝ հրատարակչական և սպասարկման գծով ծախսերը։ Հոգաբարձուների խորհրդի հաստատմանն են ներկայացվում «Նորավանք» ԳԿՀ գործունեության 2017թ. բյուջեն և հաստիքացուցակը։

   Ֆինանսական միջոցների բացակայության պատճառով «Նորավանք» ԳԿՀ-ն հնարավորություն չունի ըստ նշանակության օգտագործել Վայոց ձորի մարզի Ամաղու գյուղի տարածքում գտնվող համալիրը և հոգալ պահպանման, անգամ պահակի վարձատրման համար նախատեսված շուրջ **1 500.0 հազար դրամի** ծախսերը։ Նպատակահարմար ենք գտնում, որպեսզի այն վաճառվի շահագրգիռ որևէ կազմակերպության։